Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-715²-20.11.2023-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2022 թվականի հունիսի 15-ի Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 152-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 152. Դատական վարույթի ընդհանուր պայմանները**

1. Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ դատական վարույթն իրականացվում է գրավոր, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ բանավոր ընթացակարգով:

2. Բանավոր ընթացակարգով իրականացվում են սույն օրենսգրքի 153-րդ, 158.1-ին, 158.2-րդ, 159-րդ, 160.1-ին և 161-164-րդ հոդվածներով նախատեսված հարցերի վերաբերյալ դատական վարույթները:

3. Դատարանը սեփական նախաձեռնությամբ իրավասու է սույն հոդվածի 2-րդ մասում չնշված ցանկացած վարույթ իրականացնելու բանավոր ընթացակարգով կամ գրավոր ընթացակարգով իրականացվող վարույթն իր որոշմամբ փոխակերպելու բանավոր ընթացակարգով վարույթի:

4. Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ դատական վարույթն առաջին ատյանի դատարանում իրականացվում է միանձնյա:

5. Սույն գլխով նախատեսված դատավարական կարգի նկատմամբ վերաբերելի մասով (mutatis mutandis) կիրառելի են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-19-րդ, 34-36-րդ գլուխների և 11-րդ բաժնի կարգավորումները:

Հոդված 2. Օրենսգրքի 156-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 156. Դատական ակտերն ի կատար ածելու հետ կապված, ինչպես նաև պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող հարցերի լուծման կարգը**

1. Համապատասխան միջնորդությունը, դիմումը կամ բողոքն ստանալուց հետո եռօրյա ժամկետում դատարանը կայացնում է դատական վարույթ հարուցելու մասին որոշում, բացառությամբ սույն օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դեպքերի: Դատական վարույթ հարուցելու մասին որոշում դատարանը կայացնում է նաև սույն օրենսգրքի 153-րդ և 154-րդ հոդվածով նախատեսված հարցերը սեփական նախաձեռնությամբ քննարկելու անհրաժեշտության դեպքում:

2. Վարույթի հարուցման մասին որոշմամբ դատարանը համապատասխան մարմիններից կամ պաշտոնատար անձանցից կարող է պահանջել դատարան ներկայացնել քննության ենթակա հարցին վերաբերող նյութեր, իսկ բանավոր ընթացակարգով քննությունն իրականացնելու դեպքում՝ նաև ներկայանալ դատական նիստին:

3. Բանավոր ընթացակարգով քննությունն իրականացվում է դատական նիստում՝ դատապարտյալի, իսկ այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրել է պատիժ կատարող հիմնարկը կամ մարմինը, ապա նաև վերջինիս ներկայացուցչի մասնակցությամբ: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում պարտադիր է նաև դատախազի, դատապարտյալի օրինական ներկայացուցչի և փաստաբանի մասնակցությունը: Հիվանդության հետևանքով դատապարտյալին պատժից ազատելու կամ նրան հիվանդանոցում տեղավորելու հարցը կամ առողջական վիճակի փոփոխությամբ պայմանավորված պատիժը կրելու ուղարկելու հարցը դատարանի կողմից լուծվելիս պարտադիր է եզրակացություն տված համապատասխան բժշկական կամ հոգեբուժական հանձնաժողովի ներկայացուցչի ներկայությունը:

4. Բանավոր ընթացակարգով հարցի քննարկումը դատարանում սկսվում է նախագահողի կողմից միջնորդությունը, դիմումը կամ բողոքը հրապարակվելով,

որից հետո դատարանը հետազոտում է ներկայացված նյութերը և լսում է դատական նիստին ներկայացած անձանց կարծիքները: Վերջինը ելույթ է ունենում դատապարտյալը կամ նրա փաստաբանը: Այնուհետև դատարանը հեռանում է առանձին սենյակ՝ որոշում կայացնելու համար:

5. Դատական ակտերն ի կատար ածելու հետ կապված, ինչպես նաև պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող հարցերի քննության արդյունքում դատարանը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի վերաբերելի դրույթների կիրառմամբ կայացնում է համապատասխան միջնորդությունը, դիմումը կամ բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու կամ մերժելու մասին որոշում, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ որոշումներ:

6. Դատական ակտերն ի կատար ածելու հետ կապված, ինչպես նաև պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող հարցերը դատարանը քննում և որոշում է կայացնում դատական վարույթ հարուցելու պահից 15-օրյա ժամկետում, բացառությամբ սույն օրենսգրքի 158.1-ին հոդվածով, 158.2-րդ հոդվածով և 160-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված ժամկետը դատարանի հիմնավորված որոշմամբ կարող է երկարաձգվել ոչ ավել, քան տասնհինգ օրով:

8. Դատական ակտերն ի կատար ածելու հետ կապված, ինչպես նաև պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող հարցերի վերաբերյալ դատարանի որոշումն ամբողջությամբ պատշաճ ձևով հանձնվում կամ ուղարկվում է վարույթի մասնակիցներին ոչ ուշ, քան որոշումը հրապարակելու կամ կայացնելու հինգերորդ օրը:»:

Հոդված 3. Օրենսգրքում լրացնել 158.1-ին հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 158.1 Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը**

1. Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարանը քննում է պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի միջնորդագրի կամ սույն օրենսգրքի 133-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում դատապարտյալի բողոքի հիման վրա դատական վարույթ հարուցելու

պահից 10 օրվա ընթացքում՝ այդ մասին պատշաճ ծանուցելով դատապարտյալին, դատախազին, տուժողին, Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայություններին, իսկ կարգապահական գումարտակում պահելու դեպքում՝ կարգապահական գումարտակի հրամանատարությանը:

2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննությանը պարտադիր մասնակցում են՝

1) դատախազը.

2) դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչը և փաստաբանը, եթե դատապարտյալը փաստաբան ունի.

3) Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունների ներկայացուցիչները, իսկ կարգապահական գումարտակում պահելու դեպքում՝ կարգապահական գումարտակի ներկայացուցիչը:

3. Հարցի քննությանը կարող է մասնակցել նաև տուժողը (տուժողի լիազոր ներկայացուցիչը, տուժողի օրինական ներկայացուցիչը), սակայն պատշաճ ծանուցված տուժողի (տուժողի լիազոր ներկայացուցչի, տուժողի օրինական ներկայացուցչի) չներկայանալն արգելք չէ հարցի քննության համար: Դատարանի նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կայացված որոշմամբ դատական նիստին կարող է հրավիրվել պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի ներկայացուցիչը:

4. Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննությունն անցկացվում է դռնբաց դատական նիստում: Քննությունն սկսվում է համապատասխանաբար Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայությունների կամ կարգապահական գումարտակի ներկայացուցիչների կողմից զեկույցները հրապարակելով: Այնուհետև դատարանը լսում է դատախազի, դատապարտյալի և նրա փաստաբանի դիրքորոշումները, եթե դատապարտյալը փաստաբան ունի, իսկ տուժողի (տուժողի լիազոր ներկայացուցչի, տուժողի օրինական ներկայացուցչի) ներկա լինելու դեպքում՝ նաև նրա դիրքորոշումը:

5. Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննության համար անհրաժեշտ նյութերն իր տրամադրության տակ ունենալուց հետո դատարանը որոշում է կայացնում՝

1) դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին կամ

2) պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը մերժելու մասին:

6. Դատարանի որոշումը սույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետում ուղարկվում է դատապարտյալին, դատախազին, տուժողին, Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայություններ, իսկ կարգապահական գումարտակում պահելու դեպքում՝ կարգապահական գումարտակի հրամանատարությանը:»:

Հոդված 4. Օրենսգրքում լրացնել 158.2-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 158.2 Պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելը կամ պատժից ազատելը**

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածով նախատեսված դեպքերում դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը կամ դրա չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու կամ դատապարտյալին պատիժը կրելուց ազատելու հարցը դատարանը քննում է դատախազի, պատիժ կատարող մարմնի կամ հիմնարկի կամ դատապարտյալի միջնորդության հիման վրա դատական վարույթ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում՝ այդ մասին պատշաճ ծանուցելով դատապարտյալին, դատախազին, տուժողին և պատիժ կատարող մարմնին կամ հիմնարկին:

2. Հարցի քննությանը պարտադիր մասնակցում են՝

1) դատախազը.

2) դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչը և փաստաբանը, եթե դատապարտյալը փաստաբան ունի.

3) պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի ներկայացուցիչը:

3. Հարցի քննությանը կարող է մասնակցել նաև տուժողը (տուժողի լիազոր ներկայացուցիչը, տուժողի օրինական ներկայացուցիչը), սակայն պատշաճ ծանուցված տուժողի (տուժողի լիազոր ներկայացուցչի, տուժողի օրինական ներկայացուցչի) չներկայանալն արգելք չէ հարցի քննության համար:

4. Հարցի քննության համար անհրաժեշտ նյութերն իր տրամադրության տակ ունենալուց հետո դատարանը որոշում է կայացնում՝

1) դատապարտյալի նկատմամբ նշանակված հիմնական կամ լրացուցիչ պատիժը կամ դրա չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին կամ

2) դատապարտյալին հիմնական կամ լրացուցիչ պատիժը կրելուց ազատելու մասին, կամ

3) միջնորդությունը մերժելու մասին:

5. Դատարանի որոշումը սույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետում ուղարկվում է դատապարտյալին, դատախազին, տուժողին և պատիժ կատարող մարմնին կամ հիմնարկին:»:

Հոդված 5. Օրենսգրքի 160-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 160. Պատիժ կատարող հիմնարկների և մարմինների պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ ընդունած որոշումների դեմ ներկայացված բողոքների լուծման կարգը դատարանում**

1. Այն դեպքում, երբ պատիժ կատարող հիմնարկների և մարմինների պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ ընդունած որոշումների դեմ ներկայացված բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 123-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ապա դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վերադարձնելու մասին՝ տրամադրելով եռօրյա ժամկետ բողոքի թերությունները շտկելու և կրկին ներկայացնելու համար: Թերությունները շտկված բողոքը ներկայացված է համարվում դրա սկզբնական ներկայացման օրը:

2. Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգի խախտմամբ կամ երբ վերադարձված բողոքը չի համապատասխանեցվել սույն օրենսգրքի 123-րդ հոդվածով սահմանված

պահանջներին, ապա դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում դատական վարույթի հարուցումը մերժելու մասին:

3. Եթե ներկայացված բողոքում առերևույթ հիմնավորվել է, որ առկա է անձի կյանքին սպառնացող վտանգ, կամ նա ենթարկվել է խոշտանգման, վատ վերաբերմունքի այլ դրսևորման, ապա դատարանը բողոքը քննում և որոշում է կայացնում դատական վարույթ հարուցելու պահից 24 ժամվա ընթացքում:

4. Քննարկելով ներկայացված բողոքը՝ դատարանն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու մասին.

2) բողոքը մերժելու մասին:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված որոշումը կայացնելիս դատարանը հաստատում է դատապարտյալի իրավունքների և օրինական շահերի խախտման փաստը և

1) խախտման փաստի կապակցությամբ իրավական ընթացակարգ սկսելու նպատակով դիմում է իրավասու մարմիններին կամ պաշտոնատար անձանց կամ

2) իրավասու մարմիններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել դատապարտյալի իրավունքների խախտումներն անհապաղ վերացնելու ուղղությամբ:

6. Բողոքի քննության ընթացքում ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իրավասու է կայացնելու որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով, դրանք պահանջելով այն անձանցից, որոնց ազդեցության ոլորտում են դրանք կամ պետք է լինեն՝ սահմանելով ժամկետ դրանք դատարան ներկայացնելու համար:

7. Բողոքի քննության արդյունքում կայացված որոշման պատճենը սույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետում հանձնվում կամ ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին, բողոքարկվող որոշումը կայացրած կամ վիճարկվող գործողությունն (անգործությունը) իրականացրած պաշտոնատար անձին, նրա վերադաս մարմնին և դատախազին:

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում բողոքարկված որոշումը կայացրած կամ վիճարկվող գործողությունն իրականացրած կամ անգործությունը թույլ տված պաշտոնատար անձն անհապաղ միջոցներ է

ձեռնարկում դատարանի հաստատած՝ դատապարտյալի իրավունքների և օրինական շահերի խախտումը վերացնելու ուղղությամբ և եռօրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնում որոշումը կայացրած դատարանին:»:

Հոդված 6. Օրենսգիրքը լրացնել նոր 160.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 160.1 Դատական ակտի կատարման փուլում հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելը**

1. Եթե առաջին ատյանի դատարանում դատական ակտ կայացնելիս ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 11-րդ մասով կամ 75-րդ հոդվածով նախատեսված կարգով պատիժ նշանակելը հնարավոր չի եղել ժամանակագրական առումով դրան նախորդող դատական ակտի (ակտերի) օրինական ուժի մեջ մտած չլինելու պատճառով, ապա ժամանակագրական առումով վերջինն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման փուլում դատախազի, պատիժ կատարող մարմնի կամ հիմնարկի կամ դատապարտյալի միջնորդությամբ դատարանը քննում է դատապարտյալի նկատմամբ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու հարցը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հարցը քննում է ժամանակագրական առումով վերջինն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կայացրած դատարանը:

3. Հարցի քննության մասին դատարանը պատշաճ ծանուցում է դատապարտյալին, դատախազին, տուժողին և պատիժ կատարող մարմնին կամ հիմնարկին:

4. Հարցի քննությանը պարտադիր մասնակցում են՝

1) դատախազը.

2) դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչը և փաստաբանը, եթե դատապարտյալը փաստաբան ունի:

5. Հարցի քննությանը կարող են մասնակցել նաև տուժողը (տուժողի լիազոր ներկայացուցիչը, տուժողի օրինական ներկայացուցիչը) և պատիժ կատարող

մարմնի կամ հիմնարկի ներկայացուցիչը, սակայն պատշաճ ծանուցված տուժողի (տուժողի լիազոր ներկայացուցչի, տուժողի օրինական ներկայացուցչի) և պատիժ կատարող մարմնի կամ հիմնարկի ներկայացուցչի չներկայանալն արգելք չէ հարցի քննության համար:

6. Քննարկելով ներկայացված միջնորդությունը՝ դատարանն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) դատապարտյալի նկատմամբ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու մասին.

2) միջնորդությունը մերժելու մասին:»:

Հոդված 7. Օրենսգրքի 165-րդ հոդվածում.

1. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) դատախազը.

2) դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչը և փաստաբանը.

3) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմը՝ սույն օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ կայացված որոշումների դեմ,

4) տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը և փաստաբանը՝ սույն օրենսգրքի 160.1-ին հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ կայացված որոշումների դեմ:»:

2. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Վճռաբեկ դատարան վերանայման բողոք բերելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա տեղակալները.

2) դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչը և փաստաբանը.

3) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմը՝ սույն օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ կայացված որոշումների դեմ,

4) տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը և փաստաբանը՝ սույն օրենսգրքի 160.1-ին հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ կայացված որոշումների դեմ:»:

Հոդված 8.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքով սահմանված դատական վարույթի պայմանները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դատարան ստացված միջնորդությունների, դիմումների կամ բողոքների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2022 թվականի հունիսի 15-ի Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) ~~օրենսգրքի~~ 152-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ ~~խմբագրությամբ~~բովանդակությամբ.

«Հոդված 152. Դատական վարույթի ընդհանուր պայմանները

1. Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ դատական վարույթն իրականացվում է գրավոր, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ բանավոր ընթացակարգով:

2. Բանավոր ընթացակարգով իրականացվում են սույն օրենսգրքի 153-րդ, 158.1-ին, 158.2-րդ, 159-րդ, 160.1-ին եւ 161-164-րդ հոդվածներով նախատեսված հարցերի վերաբերյալ դատական վարույթները:

3. Դատարանը սեփական նախաձեռնությամբ իրավասու է սույն հոդվածի 2-րդ մասում չնշված ցանկացած վարույթ իրականացնելու բանավոր ընթացակարգով կամ գրավոր ընթացակարգով իրականացվող վարույթն իր որոշմամբ փոխակերպելու բանավոր ընթացակարգով վարույթի:

4. Սույն գլխով նախատեսված հարցերի վերաբերյալ դատական վարույթն առաջին ատյանի դատարանում իրականացվում է միանձնյա:

5. Սույն գլխով նախատեսված դատավարական կարգի նկատմամբ վերաբերելի մասով (mutatis mutandis) կիրառելի են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-19-րդ, 34-36-րդ գլուխների եւ 11-րդ բաժնի կարգավորումները:

Հոդված 2. Օրենսգրքի 156-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 156. Դատական ակտերն ի կատար ածելու հետ կապված, ինչպես նաեւ պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող հարցերի լուծման կարգը

1. Համապատասխան միջնորդությունը, դիմումը կամ բողոքն ստանալուց հետո եռօրյա ժամկետում դատարանը կայացնում է դատական վարույթ հարուցելու մասին որոշում, բացառությամբ սույն օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված դեպքերի: Դատական վարույթ հարուցելու մասին որոշում դատարանը կայացնում է նաեւ սույն օրենսգրքի 153-րդ եւ 154-րդ հոդվածով նախատեսված հարցերը սեփական նախաձեռնությամբ քննարկելու անհրաժեշտության դեպքում:

2. Վարույթի հարուցման մասին որոշմամբ դատարանը համապատասխան մարմիններից կամ պաշտոնատար անձանցից կարող է պահանջել դատարան ներկայացնել քննության ենթակա հարցին վերաբերող նյութեր, իսկ բանավոր ընթացակարգով քննությունն իրականացնելու դեպքում՝ նաեւ ներկայանալ դատական նիստին:

3. Բանավոր ընթացակարգով քննությունն իրականացվում է դատական նիստում՝ դատապարտյալի, իսկ այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրել է պատիժ կատարող հիմնարկը կամ մարմինը, ապա նաեւ վերջինիս ներկայացուցչի մասնակցությամբ: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում պարտադիր է նաեւ դատախազի, դատապարտյալի օրինական ներկայացուցչի եւ փաստաբանի մասնակցությունը: Հիվանդության հետեւանքով դատապարտյալին պատժից ազատելու կամ նրան հիվանդանոցում տեղավորելու հարցը կամ առողջական վիճակի փոփոխությամբ պայմանավորված պատիժը կրելու ուղարկելու հարցը դատարանի կողմից լուծվելիս պարտադիր է եզրակացություն տված համապատասխան բժշկական կամ հոգեբուժական հանձնաժողովի ներկայացուցչի ներկայությունը:

4. Բանավոր ընթացակարգով հարցի քննարկումը դատարանում սկսվում է նախագահողի կողմից միջնորդությունը, դիմումը կամ բողոքը հրապարակվելով, որից հետո դատարանը հետազոտում է ներկայացված նյութերը եւ լսում է դատական նիստին ներկայացած անձանց կարծիքները: Վերջինը ելույթ է ունենում դատապարտյալը կամ նրա փաստաբանը: Այնուհետեւ դատարանը հեռանում է առանձին սենյակ՝ որոշում կայացնելու համար:

5. Դատական ակտերն ի կատար ածելու հետ կապված, ինչպես նաեւ պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող հարցերի քննության արդյունքում դատարանը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի վերաբերելի դրույթների կիրառմամբ կայացնում է համապատասխան միջնորդությունը, դիմումը կամ բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու կամ մերժելու մասին որոշում, ինչպես նաեւ սույն օրենսգրքով նախատեսված այլ որոշումներ:

6. Դատական ակտերն ի կատար ածելու հետ կապված, ինչպես նաեւ պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող հարցերը դատարանը քննում եւ որոշում է կայացնում դատական վարույթ հարուցելու պահից 15-օրյա ժամկետում, բացառությամբ սույն օրենսգրքի 158.1-ին հոդվածով, 158.2-րդ հոդվածով եւ 160-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված ժամկետը դատարանի հիմնավորված որոշմամբ կարող է երկարաձգվել ոչ ավել, քան տասնհինգ օրով:

8. Դատական ակտերն ի կատար ածելու հետ կապված, ինչպես նաեւ պատժի կատարման ընթացքում ի հայտ եկող հարցերի վերաբերյալ դատարանի որոշումն ամբողջությամբ պատշաճ ձեւով հանձնվում կամ ուղարկվում է վարույթի մասնակիցներին ոչ ուշ, քան որոշումը հրապարակելու կամ կայացնելու հինգերորդ օրը:»:

Հոդված 3. Օրենսգրքում լրացնել 158.1-ին հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 158.1 Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը

1. Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարանը քննում է պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի միջնորդագրի կամ սույն օրենսգրքի 133-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում դատապարտյալի բողոքի հիման վրա դատական վարույթ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում՝ այդ մասին պատշաճ ծանուցելով դատապարտյալին, դատախազին, տուժողին, Քրեակատարողական եւ Պրոբացիայի ծառայություններին, իսկ կարգապահական գումարտակում պահելու դեպքում՝ կարգապահական գումարտակի հրամանատարությանը:

2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննությանը պարտադիր մասնակցում են՝

1) դատախազը.

2) դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչը եւ փաստաբանը, եթե դատապարտյալը փաստաբան ունի.

3) Քրեակատարողական եւ Պրոբացիայի ծառայությունների ներկայացուցիչները, իսկ կարգապահական գումարտակում պահելու դեպքում՝ կարգապահական գումարտակի ներկայացուցիչը:

3. Հարցի քննությանը կարող է մասնակցել նաեւ տուժողը (տուժողի լիազոր ներկայացուցիչը, տուժողի օրինական ներկայացուցիչը), սակայն պատշաճ ծանուցված տուժողի (տուժողի լիազոր ներկայացուցչի, տուժողի օրինական ներկայացուցչի) չներկայանալն արգելք չէ հարցի քննության համար: Դատարանի նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կայացված որոշմամբ դատական նիստին կարող է հրավիրվել պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի ներկայացուցիչը:

4. Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննությունն անցկացվում է դռնբաց դատական նիստում: Քննությունն սկսվում է համապատասխանաբար Քրեակատարողական եւ Պրոբացիայի ծառայությունների կամ կարգապահական գումարտակի ներկայացուցիչների կողմից զեկույցները հրապարակելով: Այնուհետեւ դատարանը լսում է դատախազի, դատապարտյալի եւ նրա փաստաբանի դիրքորոշումները, եթե դատապարտյալը փաստաբան ունի, իսկ տուժողի (տուժողի լիազոր ներկայացուցչի, տուժողի օրինական ներկայացուցչի) ներկա լինելու դեպքում՝ նաեւ նրա դիրքորոշումը:

5. Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցի քննության համար անհրաժեշտ նյութերն իր տրամադրության տակ ունենալուց հետո դատարանը որոշում է կայացնում՝

1) դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին կամ

2) պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը մերժելու մասին:

6. Դատարանի որոշումը սույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետում ուղարկվում է դատապարտյալին, դատախազին, տուժողին, Քրեակատարողական եւ Պրոբացիայի ծառայություններ, իսկ կարգապահական գումարտակում պահելու դեպքում՝ կարգապահական գումարտակի հրամանատարությանը:»:

Հոդված 4. Օրենսգրքում լրացնել 158.2-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 158.2 Պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելը կամ պատժից ազատելը

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածով նախատեսված դեպքերում դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը կամ դրա չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու կամ դատապարտյալին պատիժը կրելուց ազատելու հարցը դատարանը քննում է դատախազի, պատիժ կատարող մարմնի կամ հիմնարկի կամ դատապարտյալի միջնորդության հիման վրա դատական վարույթ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում՝ այդ մասին պատշաճ ծանուցելով դատապարտյալին, դատախազին, տուժողին եւ պատիժ կատարող մարմնին կամ հիմնարկին:

2. Հարցի քննությանը պարտադիր մասնակցում են՝

1) դատախազը.

2) դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչը եւ փաստաբանը, եթե դատապարտյալը փաստաբան ունի.

3) պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի ներկայացուցիչը:

3. Հարցի քննությանը կարող է մասնակցել նաեւ տուժողը (տուժողի լիազոր ներկայացուցիչը, տուժողի օրինական ներկայացուցիչը), սակայն պատշաճ ծանուցված տուժողի (տուժողի լիազոր ներկայացուցչի, տուժողի օրինական ներկայացուցչի) չներկայանալն արգելք չէ հարցի քննության համար:

4. Հարցի քննության համար անհրաժեշտ նյութերն իր տրամադրության տակ ունենալուց հետո դատարանը որոշում է կայացնում՝

1) դատապարտյալի նկատմամբ նշանակված հիմնական կամ լրացուցիչ պատիժը կամ դրա չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին կամ

2) դատապարտյալին հիմնական կամ լրացուցիչ պատիժը կրելուց ազատելու մասին, կամ

3) միջնորդությունը մերժելու մասին:

5. Դատարանի որոշումը սույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետում ուղարկվում է դատապարտյալին, դատախազին, տուժողին եւ պատիժ կատարող մարմնին կամ հիմնարկին:»:

Հոդված 5. Օրենսգրքի 160-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 160. Պատիժ կատարող հիմնարկների եւ մարմինների պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ ընդունած որոշումների դեմ ներկայացված բողոքների լուծման կարգը դատարանում

1. Այն դեպքում, երբ պատիժ կատարող հիմնարկների եւ մարմինների պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ ընդունած որոշումների դեմ ներկայացված բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 123-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ապա դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վերադարձնելու մասին՝ տրամադրելով եռօրյա ժամկետ բողոքի թերությունները շտկելու եւ կրկին ներկայացնելու համար: Թերությունները շտկված բողոքը ներկայացված է համարվում դրա սկզբնական ներկայացման օրը:

2. Այն դեպքում, երբ բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգի խախտմամբ կամ երբ վերադարձված բողոքը չի համապատասխանեցվել սույն օրենսգրքի 123-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ապա դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում դատական վարույթի հարուցումը մերժելու մասին:

3. Եթե ներկայացված բողոքում առերեւույթ հիմնավորվել է, որ առկա է անձի կյանքին սպառնացող վտանգ, կամ նա ենթարկվել է խոշտանգման, վատ վերաբերմունքի այլ դրսեւորման, ապա դատարանը բողոքը քննում եւ որոշում է կայացնում դատական վարույթ հարուցելու պահից 24 ժամվա ընթացքում:

4. Քննարկելով ներկայացված բողոքը՝ դատարանն ընդունում է հետեւյալ որոշումներից մեկը՝

1) բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու մասին.

2) բողոքը մերժելու մասին:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված որոշումը կայացնելիս դատարանը հաստատում է դատապարտյալի իրավունքների եւ օրինական շահերի խախտման փաստը եւ

1) խախտման փաստի կապակցությամբ իրավական ընթացակարգ սկսելու նպատակով դիմում է իրավասու մարմիններին կամ պաշտոնատար անձանց կամ

2) իրավասու մարմիններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել դատապարտյալի իրավունքների խախտումներն անհապաղ վերացնելու ուղղությամբ:

6. Բողոքի քննության ընթացքում ապացույցներ ձեռք բերելու նպատակով դատարանն իրավասու է կայացնելու որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով, դրանք պահանջելով այն անձանցից, որոնց ազդեցության ոլորտում են դրանք կամ պետք է լինեն՝ սահմանելով ժամկետ դրանք դատարան ներկայացնելու համար:

7. Բողոքի քննության արդյունքում կայացված որոշման պատճենը սույն օրենսգրքի 156-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ժամկետում հանձնվում կամ ուղարկվում է բողոքը ներկայացրած անձին, բողոքարկվող որոշումը կայացրած կամ վիճարկվող գործողությունն (անգործությունը) իրականացրած պաշտոնատար անձին, նրա վերադաս մարմնին եւ դատախազին:

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում բողոքարկված որոշումը կայացրած կամ վիճարկվող գործողությունն իրականացրած կամ անգործությունը թույլ տված պաշտոնատար անձն անհապաղ միջոցներ է ձեռնարկում դատարանի հաստատած՝ դատապարտյալի իրավունքների եւ օրինական շահերի խախտումը վերացնելու ուղղությամբ եւ եռօրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնում որոշումը կայացրած դատարանին:»:

Հոդված 6. Օրենսգիրքը լրացնել նոր 160.1-ին հոդվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 160.1 Դատական ակտի կատարման փուլում հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելը

1. Եթե առաջին ատյանի դատարանում դատական ակտ կայացնելիս ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 11-րդ մասով կամ 75-րդ հոդվածով նախատեսված կարգով պատիժ նշանակելը հնարավոր չի եղել ժամանակագրական առումով դրան նախորդող դատական ակտի (ակտերի) օրինական ուժի մեջ մտած չլինելու պատճառով, ապա ժամանակագրական առումով վերջինն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման փուլում դատախազի, պատիժ կատարող մարմնի կամ հիմնարկի կամ դատապարտյալի միջնորդությամբ դատարանը քննում է դատապարտյալի նկատմամբ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու հարցը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հարցը քննում է ժամանակագրական առումով վերջինն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կայացրած դատարանը:

3. Հարցի քննության մասին դատարանը պատշաճ ծանուցում է դատապարտյալին, դատախազին, տուժողին եւ պատիժ կատարող մարմնին կամ հիմնարկին:

4. Հարցի քննությանը պարտադիր մասնակցում են՝

1) դատախազը.

2) դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչը եւ փաստաբանը, եթե դատապարտյալը փաստաբան ունի:

5. Հարցի քննությանը կարող են մասնակցել նաեւ տուժողը (տուժողի լիազոր ներկայացուցիչը, տուժողի օրինական ներկայացուցիչը) եւ պատիժ կատարող մարմնի կամ հիմնարկի ներկայացուցիչը, սակայն պատշաճ ծանուցված տուժողի (տուժողի լիազոր ներկայացուցչի, տուժողի օրինական ներկայացուցչի) եւ պատիժ կատարող մարմնի կամ հիմնարկի ներկայացուցչի չներկայանալն արգելք չէ հարցի քննության համար:

6. Քննարկելով ներկայացված միջնորդությունը՝ դատարանն ընդունում է հետեւյալ որոշումներից մեկը՝

1) դատապարտյալի նկատմամբ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու մասին.

2) միջնորդությունը մերժելու մասին:»:

Հոդված 7. Օրենսգրքի 165-րդ հոդվածում.

1. 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2. Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) դատախազը.

2) դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչը եւ փաստաբանը.

3) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմը՝ սույն օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ կայացված որոշումների դեմ,

4) տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը եւ փաստաբանը՝ սույն օրենսգրքի 160.1-ին հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ կայացված որոշումների դեմ:»:

2. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4. Վճռաբեկ դատարան վերանայման բողոք բերելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները.

2) դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչը եւ փաստաբանը.

3) պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմը՝ սույն օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ կայացված որոշումների դեմ,

4) տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը եւ փաստաբանը՝ սույն օրենսգրքի 160.1-ին հոդվածով նախատեսված հարցերի վերաբերյալ կայացված որոշումների դեմ:»:

Հոդված 8. ~~Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքով սահմանված դատական վարույթի պայմանները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դատարան ստացված միջնորդությունների, դիմումների կամ բողոքների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-715-20.11.2023-ՊԻ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-715[1]-20.11.2023-ՊԻ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-715[2]-20.11.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	Կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով ամրագրված սկզբունքները կիրառելի չեն համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթում: «Սկզբունք» հասկացությունը	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			իրավունքի տեսությունը բնորոշում է որպես ելակետային դրույթ, հիմնարար գաղափար, որն արտահայտում է իրավունքի էությունը, պայմանավորված է իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների էությամբ և որոշիչ դեր է խաղում իրավական նորմերի ստեղծման, կիրառման և մեկնաբանման փուլերում: Այս ընդհանրական բնորոշումը հատուկ է նաև պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներին, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Օրենսդիրն ամրագրել է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի սահմաններում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:		

			Համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթը իրենից ներկայացնում է քրեադատավարական պարզեցված ընթացակարգ, որն իրականացվում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պարագայում՝ 1) հանրային մեղադրանքի կարգով հետապնդվող քրեական գործը ոչ մեծ ծանրության է, 2) մեղադրյալը պետք է ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ ենթակետի իմաստով առաջին անգամ կատարած լինի հանցանք, 3) անձը պետք է նախաքննության փուլում, պաշտպանի ներկայությամբ ընդունի առաջադրված մեղադրանքը և տա իր համաձայնությունը սույն վարույթի կարգով գործը քննելու վերաբերյալ, 4) վարույթի կիրառումը բացառվում է այն գործերով, որոնցով մեղադրյալին մեղսագրվող արարքով վնաս է պատճառվել մասնավոր անձի շահերին, 5) դատախազը մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշման մեջ դիրքորոշում է հայտնել քրեական գործը սույն		

			վարույթի կարգով քննելու վերաբերյալ, 6) դատարանը ստանալով համապատասխան քրեական գործը և հավաստվելով, որ առկա են սույն վարույթի կիրառման հիմքերը ու պայմանները եռօրյա ժամկետում պետք է որոշում կայացնի քրեական գործի վարույթը ստանձնելու և համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ հարուցելու մասին, 7) վարույթը հարուցելու որոշման մեջ պետք է նշում կատարվի այն գրավոր ընթացակարգով իրականացնելու մասին՝ սահմանելով դատավճռի կայացման օրը, 8) սույն վարույթի կիրառման արդյունքում գրավոր ընթացակարգով կայացվում է մեղադրական դատավճիռ, որով անձի նկատմամբ նշանակվում է հոդվածի սանկցիայով նախատեսված տուգանքի նվազագույն չափը, 9) դատավճիռը կայացնելուց հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, ուղարկվում է դատապարտված մեղադրյալին, նրա պաշտպանին, հանրային մեղադրողին: Կայացված դատավճռի բողոքարկման հիմքերը		

			սահմանափակ են: Դատավճիռը ուժի մեջ է մտնում ընդհանուր կարգով և ուղարկվում է կատաման: Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ համաձայանությամբ տուգանք նշանակելու վարույթը որոշակի առանձնահատկություններ ունեցող քրեադատավարական ընթացակարգ է, որի արդյունքում կայացվող դատավճիռը և նշանակվող պատիժը պետք է համապատասխանեն օրենքով սահմանված պահանջներին: «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նոր խմբագրությամբ շարադրվող 77-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Ոչ մեծ ծանրության ավարտված կամ չավարտված հանցագործություններով համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթի դեպքում նշանակվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված տուգանքի նվազագույն չափը՝ առանց լրացուցիչ պատիժ և անվտանգության		

			միջոց նշանակելու:»: Այս կարգավորման շրջանակում նախատեսվող տուգանքը ոչ թե հանդիսանում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքից շեղում, այլ դիտարկվում է որոշակի պայմանների միաժամանակյա առկայությամբ այն արդարացի պատիժը, որը նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և սահմանված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով: Հետևաբար առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասում կատարվող լրացումը հանել:		
2.	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետ **Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր**	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետում և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված «լրացնել» բառն առաջարկում ենք գրել մեծատառով, որպես նոր սկսվող նախադասություն:		
3.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նոր խմբագրությամբ շարադրվող 77-րդ հոդվածի 6-րդ մասից առաջարկում ենք հանել «Ոչ մեծ ծանրությամբ» բառերը, քանզի «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) 29-րդ հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) նոր շարադրվող 464.6-րդ հոդվածի համաձայն համաձայնությամբ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			տուգանքը նշանակելու վարույթի առարկան են կազմում բացառապես հանրային մեղադրանքի կարգով հետապնդվող ոչ մեծ ծանրության քրեական գործերը: Այս համատեքստում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նոր խմբագրությամբ շարադրվող 77-րդ հոդվածի 6-րդ մասում «Ոչ մեծ ծանրությամբ» բառերի նախատեսումը համարում ենք ավելորդ:		
4.	Պատգամավոր Արփինե Դավոյան	Նախագիծ	ՀՀ քրեական օրենսգրքի հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցանքների ցանկը հստակեցնելու և ցանկում ոչ կոռուպցիոն բնույթի հանցանքների նախատեսումը բացառելու նպատակով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ում՝ 1) «Հոդված 296. Փողերի լվացումը»	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			բառերը փոխարինել «Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով: 2) «Հոդված 441. Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանվորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ, երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)», 3) «Հոդված 549. Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը» բառերից հետո լրացնել «(բացառությամբ, երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ		

			միջոց օգտագործելով)»:		
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	Կառավարություն	Նախագծի եզրափակիչ և անցումային դրույթներ	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվում է՝ «Վարութային գործողությանը կամ դատական նիստին անձի մասնակցությունը խոչընդոտող հիվանդությունը հաստատող փաստաթղթի ձևը և տրամադրման կարգը սահմանում է առողջապահության ոլորտի քաղաքականությունը մշակող մարմինը:»: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝ 1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից. 2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:»: Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք նախատեսել համապատասխան կարգավորումները Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող ենթաօրենսդրական ակտի ընդունման ժամկետի և նրա ընդունման հետ կապված նորմերի գործողության առանձնահատկությունների վերաբերյալ:		

2.	Կառավարություն	Նախագծի 23-24-րդ և 26-րդ հոդվածներ	Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասում «4-րդ» թվից առաջ առաջարկում ենք լրացնել «2-րդ մասի» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված փոփոխությունը ըստ էության կատարվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում: Նույն դիտարկումը վերաբերում է նաև Նախագծի 24-րդ և 26-րդ հոդվածների 1-ին մասերին:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**
3.	Պատգամավոր Արփինե Դավոյան	Նախագիծ	Իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված փողերի լվացմանն առնչվող վարույթով և փողերի լվացմանը նախորդող ոչ կոռուպցիոն բնույթի հանցանքի վերաբերյալ իրականացվող վարույթով մասնագիտացված և համակողմանի քննություն իրականացնելու հրավորությունն ապահովելու համար առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			օրենսգրքի 181-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին մասով. «6.1. Սույն հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքների վերաբերյալ՝ միմյանց հետ փաստական հանգամանքներով կապված վարույթներով նախաքննությունը կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:»:		
	Պատգամավոր Արփինե Դավոյան	Նախագիծ	Հաշվի առնելով մեծածավալ դատական ակտերի և հատկապես կոլեգիալ կազմով գործը քննելու արդյունքում կայացված դատական ակտերի պարագայում յուրաքանչյուր էջը ստորագրելու պահանջի ժամանակատարությունը և աննպատակահարմարությունը՝ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 4-րդ մասում «ստորագրում են բոլոր դատավորները» բառերը	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			փոխարինել «կնքվում է, իսկ վերջին էջը ստորագրում են բոլոր դատավորները» բառերով:		
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշված 2-րդ» «օրենսգրքի» բառը և «հետևյալ խմբագրությամբ» բառերը հանել:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**
2.	Կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն	**Ընդունվել է:**

			վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: (...)»:		